



Հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ, ք Ստեփանավան, Երիտասարդական 47
հեռ (+374) 93315108,

Էլ .փոստ info_stepanavan@aarhus.am, manya_lore@yahoo.com

N002-24

26.04.2015

Ստեփանավանի քաղաքապետ
Միքայել Ղարաքեշիշյանին
Պատճենը՝ Ստեփանավանի հակահամաճարակային
կենտրոնի տնօրեն՝ Մելանյա Սարուխանյանին

Հարգելի պարոն Ղարաքեշիշյան,

Ստեփանավանի Օրհուս կենտրոնին են դիմել Մայակովսկի փողոցի բնակիչները: Նրանք պնդում են, որ Ստեփանավանի Մայակովսկի փողոցում (Սովխոզի նախկին գարաժի տարածք) աղբահանությունը կատարվում է ոչ լիարժեք, ամբողջ փողոցը աղբակույտերով է լցված, որոնց միջով ամեն օր դպրոց են գնում երեխաները, այն դեպքում, երբ աղբակույտերում հաճախ թափառում են նաև շներ: Աղբակույտերը վտանգ են ներկայացնում բնակչության, հատկապես՝ երեխաների համար, իսկ ջերմաստիճանի բարձրացմանը զուգահեռ վտանգը կմեծանա:

14.05.2001թ. Հայաստանի հանրապետությունը վավերացրել է Օրհուսի կոնվենցիան, որի առաջնային կետը պահանջում է էկոլոգիական խախտումների դեպքում պետական մարմիններին գործել անհապաղ՝ առանց ուշացումների:

Ստեփանավանի Մյասնիկյան թաղամասի հանրության կողմից
խնդրում ենք Ձեզ միջամտել վերը նշված խնդրի լուծմանը:

Հարգանքով՝

Ստեփանավանի Օրհուս կենտրոնի համակարգող

Մանյա Մելիքջանյան